

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց
Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #03



Մարտ 2021

Երևան, Հայաստան

Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ	3
Մենդի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	9
R&D	12
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	12
Կոսմետիկա	14
Առողջապահություն	16
Այլ ոլորտներ	17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ	20
Նորություններ և միջոցառումներ	23

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Մենդի և գինու արտադրության ոլորտում գործող իտալական ընկերությունները փնտրում են դիստրիբյուտորներ զրո ալկոհոլային գինու համար

Իտալական սննդամթերքի և գինու արտադրողների խումբը, որն արտադրում է գինի, սպիրտներ, տնական գարեջուր, զրո ալկոհոլով գինի, առաջին քամվածքի ձիթայուղ և քացախ, փնտրում է դիստրիբյուտորներ զրո ալկոհոլային գինու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/76f37335-7b0b-4ebe-a4d4-434eb1569ba3>

Ծածկագիր. BOIT20210211001

Բոված արևածաղկի սերմերի ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Մորդովիայի Հանրապետությունից ռուսական ընկերությունը զբաղվում է բոված արևածաղկի սերմերի արտադրությամբ: Ընկերությունը փնտրում է հուսալի գործընկերներ՝ տարածման ծառայությունների երկարաժամկետ համաձայնագիր կնքելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fbc85c2e-c3fe-4f51-bfe0-e27b8a41e758>

Ծածկագիր. BORU20210216001

Սուրճի բովման ոլորտից իտալական ընտանեկան ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, մանրածախ վաճառողներ և գործակալներ, ովքեր հետաքրքրված են էսպրեսո խառնուրդներով

Սուրճի բովման ոլորտից իտալական ընտանեկան ընկերությունն արտադրում է էսպրեսո սուրճի խառնուրդներ, որոնք առաջարկվում են հատիկի տեսքով, աղացած, պարկուճներում և մեկանգամյա

օգտագործման պատիճներում, որոնք նույնպես մասնավոր պիտակով են: Ընկերությունը հոգ է տանում սուրճի գործընթացի բոլոր փուլերի մասին, որպեսզի ապահովի «պատրաստված է Իտալիայում» կատարյալ էսպրեսոն:

Ընկերությունը փնտրում է օտարերկրյա գործընկերներ, ովքեր գործում են սննդի և խմիչքների, նաև Ho.Re.Ca. ոլորտում, ինչպես նաև վաճառքում և մանրածախ առևտրում՝ տարածման ծառայությունների և (կամ) առևտրային գործակալության համաձայնագիր կնքելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/430a96fd-5587-4966-acd9-f141b50f296e>

Ծածկագիր. BOIT20200316001

Շվեդական նորարարական բուսական ըմպելիքների ապրանքանիշը փնտրում է մեծածախ վաճառողներ և դիստրիբյուտորներ

Բույսերի վրա հիմնված նորարարական ըմպելիքներ արտադրող շվեդական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, հատկապես ներմուծողներ կամ մեծածախ վաճառողներ, որոնք մատակարարում են տարբեր առևտրային կետերի, զբաղվում են մանրածախ վաճառքով, էլեկտրոնային առևտուրով և HoReCa (հյուրանոց, ռեստորան, սրճարան) ոլորտին՝ սպառողների և HoReCa-ի մասնագետների համար իր ապրանքի հաջող տարածումն ապահովելու նպատակով: Ապրանքը իր ախորժեղի համով սահուն կերպով համադրվում է սուրճի, թեյի, ամուլիի, հացահատիկի հետ կամ կիրառվում սնունդ պատրաստելու ընթացքում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/3020c18b-3661-46e3-a1de-4ef654b1a1db>

Ծածկագիր. BOSE20210211001

Գուրմե նուշի իսպանական արտադրողը եվրոպական երկրներում փնտրում է դիստրիբյուտորներ իր արտադրանքի համար:

Նուշի արտադրության մեջ մասնագիտացված իսպանական ընկերությունն (Մալորկայից) առաջարկում է նշից արտադրանքի լայն տեսականի՝ առանց հավելանյութերի: Ընկերությունն արտադրում է բարձրորակ արտադրանքն այնտեղ, որտեղ աճում է բերքը՝ հարգելով շրջակա միջավայրը և կենսաբազմազանությունը: Ընկերությունը փնտրում է գուրմե ուտեստների դիստրիբյուտորներ կամ առևտրային գործակալներ՝ իր արտադրանքը եվրոպայում առևտրայնացնելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/35fda9ac-759a-4afa-9165-11e5693e5cb6>

Ծածկագիր. BOES20210209001



Գեոնանուշ արտադրողը Մինգապուրից փնտրում է եվրոպական գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո

Մինգապուրյան ընկերությունը, որը հիմնադրվել է 1950 թվականին, գետնանուշի արտադրանքի հայտնի ապրանքանիշ է ինչպես Մինգապուրում, այնպես էլ Ասիայում: Գետնանուշի արտադրանքը հասանելի է տեղական սուպերմարկետներում, մինի-մարթներում և խանութներում, ինչպես Մինգապուրում, այնպես էլ Ասիայում: Ընդլայնման նպատակով ընկերությունը տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրեր է փնտրում եվրոպական գործընկերների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/df054890-ccb1-415a-a1fe-3beded28d347>

Ծածկագիր. BOSG20200226001

Գործարար համագործակցության հարցումներ

Առողջ սննդի և սննդային հավելումների լեհական դիստրիբյուտորը և ներկրողը փնտրում է նոր արտասահմանյան ապրանքներ՝ իր պորտֆելում ընդգրկելու և դրանք լեհական շուկայում ներկայացնելու համար

Լեհաստանի հյուսիսարևելյան հատվածում գտնվող ներմուծող և դիստրիբյուտոր ընկերությունը, որը զբաղվում է առողջ սննդի, սննդային հավելումների և այլ արագ սպառվող ապրանքների ներմուծման և տարածման ոլորտում, փնտրում է նոր ապրանքներ, որոնք կարող է ներկայացնել լեհական շուկայում: Ընկերությունը շահագրգռված է համագործակցել տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/92308680-777c-4c6f-ad2f-d42f7b862b17>

Ծածկագիր. BRXK20210122001

Կոստվոյից ներմուծող ու պարենային ապրանքների դիստրիբյուտոր հանդիսացող ընկերությունը փնտրում է կրեմ և հարած սերուցք արտադրող

Կոստվական շուկայում սննդամթերքի զանգվածային վաճառքի և տարածման ոլորտում մասնագիտացված ընկերությունը փնտրում է պատրաստման կրեմ արտադրողներ: Ընկերությունը ցանկանում է ուսումնասիրել որակյալ արտադրողներից ներմուծման նոր հնարավորությունները տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո՝ իր արտադրանքի պորտֆելը ընդլայնելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/84f314de-f128-4fc1-b0b8-ff0aa6e68728>

Ծածկագիր. BRXK20210211001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Բելգիական նորաձևության ոլորտի դիզայներն առաջարկում է դիզայնի ծառայություններ՝ նորաձևության արտադրողներին՝ աութսորսինգի համաձայնագրերի ներքո

Բելգական ընկերությունը մասնագիտացած է կուսույրի, ինտերիերի պարագաների և տպագրության դիզայնում: Ընկերությունը հայտնի է որպես բելգիացի հայտնի մարդկանց, ինչպես նաև շոկոլադե հայտնի ընկերությունների դիզայներ:

Ընկերությունն առաջարկում է դիզայնի ծառայություններ աութսորսինգի համաձայնագրով՝ նորաձևության արտադրողներին: Ընկերությունը նաև փնտրում է նորաձևության ոլորտում առևտրային գործակալներ, ովքեր տեղական արտադրողներին կշահագրգռեն ընկերության դիզայնի ծառայությունները խթանելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/119bfda4-e411-4850-a5f7-d126bca30414>

Ծածկագիր. BOBE20210204001

Իսպանական նորաձևության ընկերությունը, որը մասնագիտացված է սմարթ կանանց համար նախատեսված կանանց կոշիկների արտադրության ոլորտում, փնտրում է տարածման ծառայություններ և արտադրական համաձայնագրեր:

Միջին-բարձր և բարձր որակի կանացի կոշիկների սեփական հավաքածուները նախագծող, արտադրող և վաճառող իսպանական ընկերությունը փնտրում է տարածման ծառայություններ մատուցող գործընկերներ: Ընկերությունը նաև շահագրգռված է արտադրական պատվերներով՝ համաձայն արտադրական պայմանագրերի: Ընկերությունը տեղակայված է Ալիկանտե քաղաքում՝ ԵՄ-ի տարածքում ամենահայտնի կոշիկների արտադրության կլաստերներից մեկում:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/054cc518-120b-4cfb-aa51-9f7e32c36021>


Ծածկագիր. BOES20210208001

Կանանց համար հարմարավետ և նորաձև մեծ չափսի հագուստ արտադրող ուկրաինական ընկերությունը փնտրում է մանրածախ վաճառողներ, դիստրիբյուտորներ և գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ժամանակակից փողոցային/էլեկտրոնային առևտրի ուկրաինական նորաձևության ապրանքանիշը խստորեն աջակցում է ներառողականությանը, որտեղ բոլոր չափսերը գեղեցիկ են և կարևոր: Շուկայում ավելի քան 9 հաջող տարիների փորձ ունենալով՝ ապրանքանիշն առաջարկում է թարմ էլեգանտ և հարմարավետ դասական հագուստներ, որոնք հագնում են սեզոններով՝ շնորհիվ իր որակի և կայունության: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր պատրաստ են համագործակցել տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/26e8521b-1075-4df4-9349-e1f1e47ec7c4>

Ծածկագիր. BOUA20210203001



Սերբիայից սոցիալական պատասխանատու տպագրական ընկերությունն առաջարկում է աութօրսինգի և արտադրական համաձայնագրեր

Հաշմանդամություն ունեցող անձանց որպես աշխատակից ունեցող սերբական ընկերությունն առաջարկում է ապրանքներ և ծառայություններ տպագրական և կարի արդյունաբերության ոլորտում: Քանի որ ընկերության արտադրական հնարավորություններն ընդլայնվում են, ընկերությունը շահագրգռված է աութօրսինգի և արտադրական համաձայնագրերի միջոցով ընդլայնվել նոր շուկաներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a1cc099d-e187-49c5-9b79-2fba628cabf8>

Ծածկագիր. BORS20210129001

Կոշիկի և կանանց կաշվե պայուսակների բուլղարական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ընտանեկան բուլղարական ընկերությունը մասնագիտացած է կանանց և տղամարդկանց կոշիկների, սանդալների և կանանց կաշվե պայուսակների արտադրության մեջ: Ընկերությունը, որն ունի փորձառու նյութերի մատակարարներ և առաջադեմ տեխնոլոգիա, կցանկանա արտադրական համաձայնագրեր կամ տարածման պայմանագրեր կնքել գործընկերների հետ ամբողջ աշխարհից:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2dca0127-9144-4eca-80a9-29d4a89db2fa>

Ծածկագիր. BOBG20210204001

Արտաքին հազուստի ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը մասնագիտացած է ճանապարհորդության և քաղաքային կյանքի համար նախատեսված հազուստի արտադրության մեջ. ձմեռային, գարնանային, աշնանային և ամռային հարմարավետ և որակյալ բաձկոններ հատուկ նախագծված այն մարդկանց համար, ովքեր շատ ժամանակ են անցկացնում դրսում: Ընկերությունը տարածման ծառայությունների մասին համաձայնագրի շրջանակներում փնտրում է առևտրային գործընկերներ և գործընկերություններ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a0022578-e314-4443-994f-1a57596d42e4>

Ծածկագիր. BORU20210217001

Գործարար համագործակցության հարցումներ

Բացօթյա արևապաշտպան (հովանոցներ), ստվերային առազաստների և պերգոլաների ֆրանսիական արտադրողը փնտրում է հատուկ տեքստիլ գործվածքների մատակարար:

Հյուսիսային Ֆրանսիայում տեղակայված ֆրանսիական ՓՄՁ-ն արտադրում է պերգոլաներ, հովանոցներ, ստվերային առազաստներ և շուտով կարտադրի էքստերիերի համար նախատեսված այլ կահույք: Ընկերությունը պատրաստ է գտնել Եվրոպայում նոր գործընկերներ և համագործակցել տեքստիլ գործվածքների մատակարարի հետ՝ նշված ապրանքներն արտադրելու և դրանց արտադրությունը տեղափոխելու համար՝ աուրսոսրսինգի կամ մատակարարման համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b6cc76ba-5c3c-4b88-97cf-3c6b04fbb49b>

Ծածկագիր. BRFR20210216002



Բացօթյա արևապաշտպան (հովանոցներ), ստվերային առազաստներ և պերգոլաներ արտադրող ֆրանսիական ընկերություն փնտրում է արտադրողի, որը կարող է վերածել (կտրել, հավաքել, կարել...) իրենց տեխնիկական գործվածքները վերջնական արտադրանքի:

Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը գտնվում է հյուսիսային Ֆրանսիայում, վաճառում է կենտրոնական և օֆսեթ



արևապաշտպան վահանակներ, արևապաշտպան առագաստներ, պերգոլաներ և շուտով այլ բացօթյա կահույք: Ընկերությունը պատրաստ է գտնել Եվրոպայում նոր գործընկերներ և համագործակցել արևապաշտպան վահանակների, պերգոլաների, սովերային առագաստների և /կամ այլ բացօթյա կահույք արտադրելու և դրանց արտադրությունը տեղափոխելու համար՝ արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2973421d-441d-4884-8bfb-5e33306a5484>

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Սողնակների ուկրաինական արտադրողն առաջարկում է իր արտադրանքը տարածման համար

Ընկերությունը հիմնադրվել է 1998 թ.-ին՝ Ուկրաինայի Դրուժկովկա քաղաքում. սա ընկերություն է, որն աշխատում է սողնակների և պտուտակների տարածման ոլորտում: 22 տարվա փորձով ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր գործունեությունը՝ տրամադրելով իր արտադրանքը տարածման համաձայնագրերի ներքո: Ընկերությունն ակնկալում է համագործակցություն սկսել դիստրիբյուտորների հետ, ովքեր աշխատում են ցանկացած մասնագիտացված շուկաների հետ, ինչպիսիք են՝ մեքենաշինությունը, կահույքը, շինարարությունը, բժշկական պարագաները:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/558f4099-97a1-4870-a259-18e5c3c90ea4>

Ծածկագիր. BOUA20210131002

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է սոսնձված փայտյա հեծաններ, փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական փայտագործական գործարանը, որը մասնագիտացած է սոսնձված կառուցվածքային հեծանների արտադրության ոլորտում, առաջարկում է պրոֆիլավորված սոսնձված փայտյա հեծաններ կառուցվածքների մոնտաժման համար և փնտրում է գործընկերներ դրսում՝ հաստատելու համար տարածման ծառայությունների համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7a76dc00-169a-4648-9067-86be6c3e448a>

Ծածկագիր. BORU20210213001

Վերջնական շինանյութեր արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Վերջնական օգտագործման նյութերի (ներկեր և լաքեր, նաև գունային մածուկ, ջրային ներկ, հատակի յուղ, ֆիլեր, սոսինձ) արտադրության մեջ մասնագիտացած ռուսական ընկերությունը գործընկերներ է փնտրում տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2a354ce7-2055-45d5-bcf5-c62e6d0d6fc3>

Ծածկագիր. BORU20210215002

Իտալական ընկերություն, որը մասնագիտացած է մարմարի վերամշակման ոլորտում, փնտրում է արտադրական համաձայնագրեր

Իտալական ընկերությունը մասնագիտացված է մարմարի վերամշակման ոլորտում, մասնավորապես՝ ներքին և արտաքին հարդարման, պատերի, հատակի և աստիճանների համար: Ընկերությունը շինարարական ոլորտում գործող արտադրողներ է փնտրում արտադրական համաձայնագրերի ներքո:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a84e8a01-de4b-4cc0-93e2-8c9a3bc94953>

Ծածկագիր. BOIT20210204003

Փոշի ներկերի հոլանդական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում:

Հոլանդական ընկերությունը ներսի և դրսի տարբեր մակերեսների համար հանքային փոշի ներկ է արտադրում: Ներկելու պահին ջուր ավելացնելը ստեղծում է ուժեղ երկկոմպոնենտային ներկ: Քանի որ ջուրը չի օգտագործվում ընկերության արտադրական գործընթացում կամ տրանսպորտում, շատ CO2 արտանետումներ են խնայվում: Եվրոպական այլ երկրներ արտահանելու նպատակով հոլանդական ընկերությունը տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո փնտրում է դիստրիբյուտորներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/683b56f7-1fda-48c3-8ea5-d52dbd21b30c>

Ծածկագիր. BONL20210216001

Գրանիտե խոհանոցի լվացարանների լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը մասնագիտացած է բարձրորակ գրանիտե խոհանոցային լվացարանների արտադրության մեջ: Մեկ ամանի, կրկնակի ամանի և մեկ ու կես ամանի լվացարաններ հասանելի են ավտոմատ սիֆոնով, ծորակով և հեղուկի դիսպենսերով: Ընկերությունը կցանկանա համագործակցություն սկսել տարբեր ծառայությունների համաձայնագրով՝ Եվրոպայի և ԱՄՆ-ի ընկերությունների հետ: <https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5fefa6a0-9e22-4cb7-9760-3f70a2d64339>



Ծածկագիր. BOPL20200211001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռուսական առևտրային և շինարարական ընկերությունը փնտրում է սալահատակի սալիկների մատակարարներ

Շինանյութերի վաճառքի ոլորտում 10 տարվա փորձ ունեցող ռուսական առևտրային և շինարարական ընկերությունը մատակարարի համաձայնագրով փնտրում է տարբեր գույների և ձևերի սալահատակի սալիկների օտարերկրյա մատակարարներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6493d6eb-9dd1-4d4e-b671-a7f823b115d7>

Ծածկագիր. BRRU20210302002

Սոսնձված փայտանյութ արտադրող ռուսական արտադրողը փնտրում է կլոր փայտանյութի մատակարարներ

Ռուսաստանի փայտամշակման գործարանը, որը մասնագիտացած է սոսնձված կառուցվածքային փայտանյութի արտադրության մեջ, արտասահմանում փնտրում է կլոր փայտանյութի և փափուկ փայտի մատակարարներ: Ընկերությունը հետաքրքրված է երկարաժամկետ մատակարարի համաձայնագրի ներքո համագործակցությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/27f9c3c9-f58e-4fae-8b98-7c4556015513>

Ծածկագիր. BRRU20210301002



Ավստրիա / Ուկրաինա գիտական և տեխնոլոգիական համագործակցություն (տեխնոլոգիաների փոխանցման ոլորտում)

Ուկրաինայի համալսարանը համատեղ առաջարկ է պատրաստում Ավստրիա/Ուկրաինա գիտական և տեխնոլոգիական համագործակցության միջազգային ծրագրի համար: Ծրագիրը կմշակի Ուկրաինայի և Ավստրիայի գիտնականների համագործակցության նոր տարբերակներ: Համալսարանը փնտրում է գործընկերներ (համալսարաններ և հետազոտական կենտրոններ), ովքեր հետաքրքրված են համագործակցությամբ և առաջարկում են իրենց փորձը տեխնոլոգիաների փոխանցման ոլորտում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8362f0dd-0ea6-472e-b0a1-abf739dc4bb2>

Ծածկագիր. RDUА20200318001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից առևտրային գործակալության և լիցենզային համաձայնագրի ներքո գործընկերներ է փնտրում կառավարման տեղեկատվական ծրագրակազմի համար, որը հետևում է աշխատակիցներին աշխատավայրում գտնվելու ընթացքում

Ծրագրային ապահովման ոլորտի ընկերությունը մշակել է դաշտային ծառայության կառավարման ծրագրակազմ ցանկացած բիզնեսի համար, որտեղ աշխատողներն ու օպերատիվ աշխատակիցները կատարում են գործեր, որոնք գործատուի տարածքում չեն: Այն հարմար է բազմաթիվ ոլորտների համար, և ՓՄՁ-ն փնտրում է լիցենզիայի և առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. BOUK20210215001

Խորվաթական S2S ընկերությունը փնտրում է համագործակցություն աութսորսինգային, ենթապայմանագրային կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրի ներքո

Խորվաթական ընկերությունը, որը հիմնադրվել է 1992 թ.-ին, մշակել է ERP արդյունաբերության, առևտրի և շինարարության, կոմունալ գործունեության, ջրամատակարարման և էներգիայի բաշխման համար, ապահովագրական ընկերություններում ռեսուրսների պլանավորման և կառավարման համակարգի համար, բյուջեի օգտագործողների համար տեղեկատվական համակարգ, առաքման և նյութատեխնիկական բիզնեսում ռեսուրսների պլանավորման և կառավարման համակարգ: Ընկերությունը փնտրում է երկարաժամկետ համագործակցություն աութսորսինգային, ենթապայմանագրային կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրի շրջանակներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/83f60829-4bec-4ddc-b7ae-5b954fb26494>

Ծածկագիր. BOHR20210126001

Շարժական աշխատուժի երթուղիման և ժամանակացույցի համար Արհեստական բանականության վրա հիմնված օպտիմալացման ծրագիր

Մեծ Բրիտանիայից նորաստեղծ ընկերությունը գործարկել է ծրագիր, որը օպտիմիզացնում է դաշտային ծառայությունների պլանավորումը (տնային խնամք, մաքրում, անվտանգություն, հաստատությունների կառավարում, անձնակազմի գործակալություններ, դաշտային ինժեներներ): Ավտոմատացված պլանավորումը հանգեցնում է թափոնների զգալի կրճատմանը: Ընկերությունը ձգտում է արտոնագրել ծրագրաշարը ինտեգրատորներին, որոնք առաջարկում են շարժական աշխատուժի ավելի լայն լուծումներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ebc773c7-9e0b-4d81-b9b7-254ee5e34eec>

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական վեբ ծրագրավորման ոլորտում գործող ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ աութսորսինգային համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Ռումինական ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք մասնագիտացված են վեբ մշակման և ծրագրերի ապահովման, վեբ դիզայնի, կրեատիվ մարքեթինգի, էլ.փոստի շուկայավարման արշավների, Facebook և LinkedIn գովազդային արշավների, սոցիալական մեդիայի շուկայավարման և որոնման համակարգի օպտիմիզացիայի ոլորտներում՝ աութսորսինգային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2c4c1604-b919-4855-a2e0-dd57594fbcf7>

Ծածկագիր. BRRO20200617001

Կոսմետիկա



Գործարար համագործակցության առաջարկներ

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է բնական կոսմետիկա, փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացված է նորարարական տեխնոլոգիաների բնական

բաղադրիչների (ամինաթթուներ, A, E վիտամիններ, հիալուրոնաթթու) վրա հիմնված կոսմետիկայի մշակման, արտադրության և վաճառքի ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ հաստատելու համար տարածման ծառայությունների համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/de9ef3d7-469c-4820-ac50-02cf3718607f>

Ծածկագիր. BORU20210208002

Գլխամաշկի բնական սկրաբ արտադրող ուկրաինական ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Ուկրաինական ընկերությունը, որն արտադրում է 100%-անոց գլխամաշկի բնական սկրաբ Կարպատյան լեռների տարածաշրջանում, փնտրում է միջազգային գործընկերներ իր արտադրանքի համար՝ հաստատելու համար տարածման ծառայությունների և/կամ առևտրային գործակալության համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/823f70b9-8944-4a80-8050-8208d0d8e95b>

Ծածկագիր. BOUA20201204004



Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական ընկերությունը, որը զբաղվում է կոսմետիկայի և դեղագործական ապրանքների ներմուծմամբ, փնտրում է նոր օտարերկրյա գործընկերներ՝ ներառելու համար իրենց պորտֆելում նոր արտադրանք և դրանք լեհական շուկայում ներկայացնելու նպատակով

Ընկերությունը Լեհաստանի հյուսիս-արևելքից, որը հանդիսանում է բնական կոսմետիկայի և դեղագործական ապրանքների ոլորտի դիստրիբյուտոր և ներմուծող, փնտրում է նոր ապրանքներ՝ դրանք լեհական շուկայում ներկայացնելու համար: Ընկերությունը հետաքրքրված է տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2375fbc5-09cd-4ff3-8691-4b56f21c941b>

Ծածկագիր. BRPL20210120002



Գործարար համագործակցության առաջարկներ

Դեղորայքային և հիգիենայի միջոցների ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը Նովոսիբիրսկի տարածաշրջանից, որը գործում է դեղերի և հիգիենայի պարագաների արտադրության ոլորտում՝ կիրառելով նորարարական տեխնոլոգիաներ (վերքերի խնամքի միջոցներ, մանկական փոշի, հիգիենիկ փոշի): Ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/65444ff4-36de-4e1d-994b-ba8df30319f7>

Ծածկագիր. BORU20210210002

Իտալական ընկերությունը, որը հայտնաբերել է հակամիկրոբային և հակավիրուսային նյութ (եվրոպական արտոնագիր) բժշկական սարքերում օգտագործելու համար, ամբողջ աշխարհում փնտրում է մեծածախ վաճառողներ

Իտալական ընկերությունը, որն օգտագործում է արտոնագրված արձաթյա ֆորմուլա, մշակել է բժշկական սարքեր, դիմակներ, դիմակների սփրեյներ, քթի և կոկորդի սփրեյներ, որոնք կկիրառվեն ներկա պանդեմիկ իրավիճակում: Այս ընկերությունը փնտրում է մեծ հնարավորություններ՝ ներկայացնելու համար իր բժշկական սարքավորումները գլոբալ շուկայում և ցանկանում է համագործակցություն հաստատել մեծածախ վաճառողների հետ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0affe64a-dd26-43bd-a359-9755ce18c387>

Ծածկագիր. BOIT20210217002

Ռուսական ընկերությունը որն արտադրում է դիետիկ հավելումներ, փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է Ալթայի երկրամասի եղնիկների արյան մշակմամբ և դրանցից դեղերի և դիետիկ հավելումների արտադրության ոլորտում, որոնք նպաստում են առողջությանը, փնտրում է դիստրիբյուտորներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e1618579-9dac-4872-b495-b9507d3c26d4>

Ծածկագիր. BORU20210220001

Գործարար համագործակցության հարցումներ

Առողջապահական ծառայություններ մատուցողների մատակարարը Միացյալ Թագավորությունից, փնտրում է ինֆեկցիաների կանխարգելման նորարարական լուծումներ

Միացյալ Թագավորության հարավ-արևմուտքում հաստատված և հայտնի ընկերությունը մասնագիտացած է ինֆեկցիաների կանխարգելման, ստերիլիզացման և վերացման ծառայությունների տարածմամբ ազգային առողջապահական ծառայությունների մատուցողների, մասնավոր առողջապահական ծառայություններ տրամադրողների շրջանում: Այժմ ընկերությունը փնտրում է եզակի և նոր լուծումներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4148014d-6d23-4d9f-8e52-29d265411ea2>

Ծածկագիր. BRUK20210304002

Այլ ոլորտներ



Գործարար համագործակցության առաջարկներ

**Առևտրի դարակաշարեր արտադրողը փնտրում է
դիստրիբյուտորներ**

Ուկրաինական ընկերությունը, որն արտադրում է վաճառակետերի համար նախատեսված դարակաշարեր, փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում: Ընկերությունն առաջարկում է ստորագրել տարածման ծառայությունների համաձայնագրեր իր ապրանքների համար, որոնք նախագծված են հատուկ քաշի, շարժունակության և շենքի պահանջների վրա:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b3f67ff8-e9fa-40d3-9118-5dfd02d2e478>

Ծածկագիր. BOUA20210131005

**Աղետների վերականգնման և ժամանցի նպատակների համար հարմար ուլտրաֆիլտրացիոն ջրի
մաքրման արտադրանքի բրիտանական դիզայները և արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ընկերությունը Մեծ Բրիտանիայից, որը նախագծում և արտադրում է ջրի մաքրման արտադրանքի մի շարք տեսակներ՝ ռազմական, հումանիտար և բացօթյա հանգստի նպատակներով, տարածման ծառայությունների ներքո փնտրում է դիստրիբյուտորներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e41e33b0-505d-4216-a0ff-273823c57914>

Ծածկագիր. BOUK20210216002

**Օրգանական մեղր և օրգանական պարարտանյութերի մակեդոնական արտադրողը փնտրում է
դիստրիբյուտորներ Եվրոպական բոլոր երկրներում:**

Ընկերությունը, որը արագ զարգացող միկրո ընկերություն է, հետաքրքրված է տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրով՝ շահագրգիռ սուբյեկտների հետ համագործակցության ընթացքում իր ապրանքների լայն տեսականին արտաքին շուկաներում ընդլայնելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5cdd9281-2cad-44f1-a2b2-41c44179f9eb>

Ծածկագիր. BOMK20201216004

Ուկրաինական ընկերությունը փնտրում է փայտե գնդիկների դիստրիբյուտորներ

Փայտե գնդիկների արտադրությամբ զբաղվող ուկրաինական ընկերությունը տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո փնտրում է գործընկերներ: Ընկերության արտադրանքը

սերտիֆիկացված է ENPlus եվրոպական ստանդարտով: Առաջին արտադրական գիծը գործարկվել է 2008 թվականին: Արտադրողն ի վիճակի է մատակարարել զգալի քանակությամբ փայտե գնդիկներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f60d848f-608f-4487-b34d-42bdfefc53ed>

Ծածկագիր. BOUA20210131004

Պողպատե պրոֆիլների արտադրության համար նախատեսված սարքավորումներ արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լիպեցկի տարածաշրջանից ռուսական ընկերությունը զբաղվում է ճկված պողպատե պրոֆիլների արտադրության համար հաստոցների և ավտոմատ գծերի արտադրությամբ և վաճառքով: Ընկերությունը տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո փնտրում է օտարերկրյա գործընկերներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b923d9fa-ffc7-48d1-a22f-1d716fc097fd>

Ծածկագիր. BORU20210218001

Ջրաքիսի մորթիների ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրական պատվերներ Եվրոպայում

Ուդմուրտիայից ռուսական ընկերությունն ավելի քան 50 տարի զբաղվում է սկանդինավյան ջրաքիսի բուծմամբ (սև, շականագագույն, սպիտակ, արծաթե կապույտ): Ընկերությունը եվրոպական երկրներում գործընկերներ է փնտրում տարածման ծառայությունների կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0155df4d-7fc3-459a-ae01-2eae0f8c9dc>

Ծածկագիր. BORU20210311001

Մետաղական տարաներում մոմեր արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ արտերկրում

Մետաղական տարաներում պարաֆինային մոմեր արտադրող լեհական ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր ցանկանում են իր արտադրանքը տարածել արտերկրում: Մոմավառությունն ապահովում է 6-ից 30 ժամվա ընթացքում գեղեցիկ կրակ: Դրանք ավելի հարմար են, քան սովորական կրակը և հեշտությամբ լուսավորվում են բաց երկնքի տակ: Բացի այդ, մատչելի են ցուցանակի մի քանի իրեր, ինչպիսիք են բետոնե մոդուլային օղակները կամ լողացող հարմարանքները:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9fac1de8-5b28-4808-8dbc-002553fd6c1a>

Ծածկագիր. BOPL20210217001

Գործարար համագործակցության հարցումներ

Մլովենական ՓՄՁ-ն փնտրում է պոլիէթիլենային զիփ պայուսակների և նատրոն պայուսակների արտադրող

Մլովենական ՓՄՁ-ն, որը 15 տարի զբաղվում է տարբեր կիրառման պոլիէթիլենային տոպրակների մշակմամբ և արտադրությամբ, փնտրում է պոլիէթիլենային զիփ պայուսակների և նատրոնային պայուսակների արտադրող կամ մատակարար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7757fcf8-a51f-4aec-9d35-1dcd04fb3fbb>

Ծածկագիր. BRFR20210121001


Հունական ընկերությունը փնտրում է սպորտային սարքավորումներ արտադրողի իր փրկարար բաձկոնի արտադրության համար

Հունական սպորտի և ժամանցի ոլորտի ընկերությունը մշակել է բարձր տեխնոլոգիական փրկարար բաձկոն՝ խելացի գործառույթներով՝ ջրային սպորտից օգտվողների անվտանգության, հարմարավետության և հաղորդակցության հատկությունների բարելավման համար: Հաճախորդը ցանկանում է գտնել օտարերկրյա գործընկեր, ով ունակ է արտադրել այս ապրանքը:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c423e7a6-4aeb-48eb-9391-d660cc408a63>

Ծածկագիր. BRFR20210128001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Շարժական աշխատուժի երթուղման և ժամանակացույցի համար Արհեստական ինտելեկտի վրա հիմնված օպտիմալացման ծրագիր

Մեծ Բրիտանիայից նորաստեղծ ընկերությունը գործարկել է ծրագիր, որը օպտիմիզացնում է դաշտային ծառայությունների պլանավորումը (տնային խնամք, մաքրում, անվտանգություն, հաստատությունների կառավարում, կադրային գործակալություններ, դաշտային ինժեներներ): Ավտոմատացված պլանավորումը հանգեցնում է թափոնների զգալի կրճատմանը: Ընկերությունը ցանկանում է արտոնագրել ծրագրաշարը ինտեգրատորներին, որոնք առաջարկում են շարժական աշխատուժի ավելի լայն լուծումներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ebc773c7-9e0b-4d81-b9b7-254ee5e34eec>

Ծածկագիր. TOUK20210305001

Մետաղների փորձարկման տեխնոլոգիա, որը արդյունահանում է սթրեսի/լարվածության ճշգրիտ կորեր 3 րոպեանոց ճնշման փորձությունից

Մեծ Բրիտանիայի նորաստեղծ ընկերությունը մշակել է նատարանային փորձարկման սարք, որը հնարավորություն է տալիս արդյունահանել իրական և անվանական մետաղական լարվածության կորերը 3 րոպեանոց ճնշման փորձությունից: Արագ փորձարկումն ապահովում է յուրահատուկ և գործող մեխանիկական հատկությունների տվյալներ մետաղագործության R&D, ձախողման վերլուծության և նյութերի մոդելավորման ծրագրերի համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ փորձարկման և տեխնիկական համագործակցության ներքո գտնվող դեպքերի ուսումնասիրությունների համար և համագործակցություն՝ տեխնիկական օժանդակությամբ առևտրային համաձայնագրերի ներքո վերջնական օգտագործողների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6a682f87-a431-42d6-bb38-1cc6f1881eed>

Ծածկագիր. TOUK20210219001


Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Իտալական դեղագործական ընկերությունը փնտրում է գործընկերներ անհատականացված դեղերի 3D տպման նոր համակարգ մշակելու համար:

Դեղագործական ոլորտում մասնագիտացված իտալական ընկերությունը մշակում է անհատականացված դեղամիջոցների 3D տպագրության նոր համակարգ, որը հիմնված է էքստրուզիայի տեխնիկայի վրա: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տեխնիկական համագործակցության համաձայնագրով՝ բեռնման սարքավորման գործընթացն ուսումնասիրելու և մշակելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/40883bde-e244-4d93-8525-7dfe64e4da1c>

Ծածկագիր. TRIT20210301001



Փեյնթբոլի խաղի կառավարման համակարգի արդիականացում

Լատվիական ընկերությունը, որը զբաղվում է փեյնթբոլի խաղերի բիզնեսով և սարքավորումներ է մատակարարում փեյնթբոլի խաղերի մենջերներին/օպերատորներին, տեխնիկական համագործակցության պայմանագիր է փնտրում փեյնթբոլ խաղի կառավարման համակարգի տեխնոլոգիան արդիականացնելու համար՝ ավելացնելով ընդլայնված ֆունկցիոնալությունը: Համակարգը վերամշակելուց հետո գործընկերը պետք է կարողանա փոքր շարքերով արտադրել արդիականացված փեյնթբոլ խաղերի կառավարման սարքավորումներ՝ արտադրական համաձայնագրի միջոցով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ca5198b2-ee98-4cff-80e3-88d546e84079>

Ծածկագիր. TRLV20200831001

Նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2021 թ.-ի մայիս, հունիս ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Մայիս

10/05/2021	6th International B2B Software Days - the Future of Digital Business- virtual event Ավստրիա Միջոցառումը անվճար է և հիմնականում ուղղված է ընկերություններին և հետազոտական հաստատություններին, որոնք փնտրում են տեխնոլոգիական, հետազոտական և բիզնեսի համագործակցություն: Թվային բիզնեսում տեխնիկական փորձ չունեցող խորհրդատվական ընկերությունները այս միջոցառման թիրախային խումբը չեն: https://2021.b2bsoftwaredays.com/
------------	---

25/05/2021	<p>Tmatch – virtual IT/ICT cooperation day- virtual event</p> <p>Լեհաստան</p> <p>Ձեռնարկությունների զարգացման լեհական գործակալությունը (PARP) կազմակերպում է վիրտուալ համագործակցության հաստատման միջոցառում՝ ուղղված SS / S2S ոլորտին: Միջոցառման նպատակն է խթանել միջազգային համագործակցությունը տարբեր տեսակի SS / S2S ծառայություններ և սարքավորումներ արտադրողների, ծառայություններ մատակարարողների, դիստրիբյուտորների և վերջնական սպառողների միջև: Միջոցառմանը մասնակցությունն անվճար է:</p> <p>http://tba/</p>
------------	---

Հունիս

09/06/2021	<p>Food eirEEN Meet the Buyer and Matchmaking Event 2021- virtual event</p> <p>Իռլանդիա</p> <p>Food eir-ին մասնակցությունն անվճար է: Գրանցումը մինչև 2021 թվականի հունիսի 2-ը:</p> <p>Միջոցառումն ուղղված է նորարարական և աճին միտված սննդի ձեռնարկություններին հետևյալ ոլորտներից.</p> <ul style="list-style-type: none"> * Հացաբուլկեղեն * Ըմպելիքներ * Սառեցված սնունդ * Հրուշակեղեն * Կաթնամթերք * Սննդամթերքի բաղադրիչներ * Մրգեր և բանջարեղեն * Սննդամթերք * Միս
------------	---

	<p>* Աղի / նախուտեստ</p> <p>https://food-eireen-meet-buyer.b2match.io/ :</p>
17/0/2021	<p>Tech4SmartCities - Sustainable, smart technologies for cities. Brokerage and pitching event.- virtual event</p> <p>Բեկիա</p> <p>Միջոցառման ուշադրության կենտրոնում կլինեն էներգիայի արդյունավետության, քաղաքային շարժունակության, կայուն շինարարության, շրջանաձևության, ցածր ածխածնի տնտեսության և թվային վերափոխման հետ կապված տեխնոլոգիաներն ու լուծումները, որոնք կարող են նպաստել քաղաքների կլիմայի չեզոքության խնդիրների լուծմանը և դրանց կայունության բարձրացմանը:</p> <p>https://tech4smartcities-2021.b2match.io/</p>

ԱՎԱԳ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ _ SENIOR EXPERTEN SERVICE (SES)

SES ծրագրի առավելությունները

- Մասնագետների վերապատրաստում, ուսուցում, որակավորում
- Ծառայությունների մատուցման, արտադրական գործընացի բարելավում, օպտիմալացում
- Տեխնիկական, արտադրական, կազմակերպչական խնդիրների լուծում
- Երկար տարիների փորձ ունեցող մասնագետների միջնորդում
- Խորհրդատվություն տնտեսության ավելի քան 50 ճյուղերի համար
- Ուղարկված հարցմանը համապատասխան աջակցություն, խորհրդատվություն Ովքե՞ր կարող են օգտվել SES ծրագրից
- Փոքր ու միջին ձեռնարկությունները տնտեսության ամենատարբեր ոլորտներից
- Հանրային և բժշկական հիմնարկները
- Կրթական ձեռնարկությունները

➤ Հիմնադրամները

SES ծրագրի ֆինանսավորումը

Պատվիրատուն պարտավորվում է ստանձնել Հայաստանում նախատեսվող ծախսերը՝ կացարան, օրական 3 անգամ սնունդ, օրական 5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ որպես գրպանի փող:

Գերմանական կողմն իր վրա է վերցնում ինքնաթիռի տոմսի և ապահովագրության ծախսերը:

Հետաքրքրե՞ց Ձեզ: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հայաստանում Ավագ փորձագետների ծառայության ներկայացուցիչ Մարիամ Մաժինյանին:

Հեռ.՝ +374 95 12 84 87

E mariam.mazhinyan@armenien.ahk.de

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Custom/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: